# ՍՆՆԴԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**ՀՏԴ 330.55**
**DOI: 10.56246/18294480-2023.15-23**

**ԳԵՎՈՐԳՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ**
*ԳՊՀ դասախոս,*
*տնտեսագիտական ֆակուլտետի*
*կառավարման և ֆինանսների ամբիոնի ասպիրանտ*
*էլփոստ՝ kor.gevorgyan@gmail.com*

***Արդյունաբերությունը Հայաստանում ավանդաբար հանդիսացել է տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը: Հայաստանի ՀՆԱ կառուցվածքում արդյունաբերության մասնաբաժինը տարբեր տարիներին տատանվել է 13-25%-ի շրջանակներում: Ընդ որում վերջինս մեծապես կախված է մշակող արդյունաբերության ոլորտում արձանագրված փոփոխությունների դինամիկայից, քանի որ այն ապահովում է այդ ոլորտում ձևավորվող ավելացված արժեքի 55%-ից ավելին:***

***2000-2020 թվականների ընթացքում արդյունաբերության ոլորտում տնտեսվարողների քանակը ավելացել է շուրջ 2,6 անգամ՝ հասնելով 3253-ի: Թեև մշակող արդյունաբերության տնտեսվարող սուբյեկտների քանակը դիտարկվող ժամանակահատվածում էական փոփոխության չի ենթարկվել, այդուհանդերձ ամբողջ արդյունաբերության տնտեսվարողների շուրջ 87-90%-ը գործում են հենց մշակող արդյունաբերության ոլորտում:***

***2000-2017 թվականների ընթացքում արդյունաբերության արտադրողականությունը աճել է շուրջ 8,1 անգամ, սակայն 2018-2020 թվականներին սկսել է նվազել՝ կապված մշակող արդյունաբերության արտադրողականության կրճատման հետ: Մյուս կողմից՝ 2009-2017 թվականներին շուրջ 2,6 անգամ աճել է և՛ արդյունաբերության, և՛ մշակող արդյունաբերության արտադրողականությունը:***

***Այսպիսով, կարևոր է ընդգծել, որ արդյունաբերության ոլորտում աճը կամ նվազումը, ինչպես նաև արդյունաբերության արտադրողականության աճը կամ նվազումը մեծապես կախված է հենց մշակող արդյունաբերության ոլորտի դինամիկայից:***

***Սննդարդյունաբերությունն իր հերթին դիտարկվող ողջ ժամանակահատվածում մշակող արդյունաբերության մեջ ունեցել է ամենամեծ մասնաբաժինը՝ որոշ տարիներին կազմելով անգամ մշակող արդյունաբերության արտադրանքի գրեթե կեսը: Այնուհանդերձ, վերջինիս աճը կամ նվազումը ոչ միշտ է հանգեց-***

***նում մշակող արդյունաբերությունում համապատասխանաբար դրական կամ բացասական դինամիկայի:***

***Բանալի բառեր՝*** *Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ), արդյունաբերություն, մշակող արդյունաբերություն, սննդամթերքի արտադրություն, աճ, տեսակարար կշիռ, տնտեսվարող սուբյեկտների քանակ, արտադրողականություն:*

Հայրենական պաշտոնական վիճակագրությունը 2000-ականների սկզբին հրապարակում էր սննդամթերքի և խմիչքների արտադրության միասնական ցուցանիշ, իսկ որոշ տարիներին այն ներառում էր, բացի նշված երկուսից, նաև ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը: Ուստի սննդարդյունաբերության ոլորտի ուսումնասիրության և համադրելի պաշտոնական ցուցանիշների վերլուծության նպատակով դիտարկել ենք 2009-2022թթ.:

*Գծապատկեր 1. Մշակող արդյունաբերության ենթաճյուղերի տեսակարարկշիռը մշակող արդյունաբերության մեջ:*




Սննդամթերքի արտադրությունը մշտապես հանդիսացել է մշակող արդյունաբերության ծավալում ամենամեծ մասնաբաժինն ունեցող արտադրության ճյուղը: Ընդ որում դիտարկվող ողջ ժամանակահատվածի ընթացքում ճյուղում արձանագրվել է միայն աճի ինդեքսի դրական դինամիկա, բացառությամբ 2015 թվականի, որը միակ տարին է, երբ գրանցվել է սննդամթերքի արտադրության անվանական ծավալի 4,0 տոկոսային կետով նվազում: Չնայած ծավալային նվազմանը՝ ենթաճյուղի բնեղեն արտահայտությամբ

ծավալը աճել է, ինչը ցույց է տալիս, որ դրամային ծավալների նվազում գրանցվել է հիմնականում գնային գործոնի հաշվին:

*Գծապատկեր 2. Սննդամթերքի արտադրության ծավալի և աճի դինամիկան:*




Ընդհանուր առմամբ 2009 թվականի համեմատությամբ 2022 թվականին թե՛ սննդամթերքի արտադրության անվանական ծավալն ընթացիկ գներով և թե՛ մշակող արդյունաբերական արտադրանքի ծավալն ընթացիկ գներով աճել են շուրջ 4 անգամ:

*Գծապատկեր 3. Մշակող արդյունաբերության և սննդամթերքի արտադրության անվանական ծավալի դինամիկան:*




Միաժամանակ, ի տարբերություն վերջին 14 տարվա ընթացքում սննդամթերքի արտադրության անվանական ծավալի կայուն աճին, այնուամենայնիվ իրական աճի դինամիկան նույն կայունությունը չի ցուցաբերում:

Նշվածը ակնհայտ է հատկապես 2011-2012թթ. և 2018-2020թթ. ընթացքում, երբ սննդամթերքի արտադրության անվանական ծավալը դինամիկ աճում է, սակայն իրական աճի տեմպերը էականորեն դանդաղում են:

*Գծապատկեր 4. Մշակող արդյունաբերության և սննդամթերքի արտադրության ծավալի իրական աճի դինամիկան:*




Մշակող արդյունաբերության և սննդամթերքի արտադրության ծավալների իրական աճի դինամիկան արտացոլող համեմատական գծապատկերից կարող ենք եզրահանգել, որ թեև սննդամթերքի արտադրությունը հանդիսանում է մշակող արդյունաբերության ծավալում ամենամեծ մասնաբաժինն ունեցող ենթաճյուղը, այնուհանդերձ վերջինիս աճը կամ նվազումը ոչ միշտ է հանգեցնում մշակող արդյունաբերությունում համապատասխանաբար դրական կամ բացասական դինամիկայի:

*Գծապատկեր 4. Արտադրողականությունը մշակող արդյունաբերության և սննդամթերքի արտադրության մեջ*



2009-2017 թվականների ընթացքում մշակող արդյունաբերության արտադրողականությունը աճել է շուրջ 22,6 անգամ, իսկ մասնավորապես սննդամթերքի արտադրությունը՝ 2,4 անգամ: Սակայն 2018-2020 թվականներին այն սկսել է նվազել մշակող արդյունաբերության մեջ՝ կապված վերջինիս կառուցվածքում խոշոր ճյուղերի, այդ թվում սննդամթերքի արտադրության, արտադրողականության կրճատման հետ:

*Գծապատկեր 5. Աշխատողների միջին տարեկան թվաքանակը մշակող արդյունաբերության և սննդամթերքի արտադրության մեջ:*




2009-2017 թվականների ընթացքում մշակող արդյունաբերության մեջ ներգրավված աշխատողների թիվը աճել է շուրջ 1,5 անգամ, մասնավորապես սննդամթերքի արտադրությունը՝ 1,7 անգամ: Կարևոր է ընդգծել, որ մշակող արդյունաբերությունում և հատկապես սննդամթերքի արտադրությունում աշխատատեղերի ընդլայնումը անհրաժեշտ է ապահովել գերազանցապես որակյալ աշխատատեղերի ստեղծման հաշվին, որոնք կբնութագրվեն միջինից բարձր արտադրողականությամբ և աշխատավարձերով:

Դիտարկվող ժամանակահատվածում ավելացել է նաև սննդամթերքի արտադրության բնագավառում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների թիվը:

*Գծապատկեր 6. Տնտեսավարող սուբյեկտների քանակը մշակող արդյունաբերության և սննդամթերքի արտադրության մեջ:*




Եվ վերջապես, ուսումնասիրելով սննդամթերքի արտադրության թողարկման և իրացման ծավալների դինամիկան, կարող ենք ասել, որ դիտարկված ողջ ժամանակահատվածում թողարկված արտադրանքը ամբողջությամբ իրացվել է: Անգամ 2010-2013թթ. ընթացքում իրացումը գերազանցել է թողարկմանը, որն իրականացվել է նախորդ տարիներին արտադրված պաշարների հաշվին:

*Գծապատկեր 7. Սննդամթերքի արտադրության թողարկման և իրացման ծավալները, մլրդ դրամ:*




Ինչպես նշել էինք նախորդ հետազոտության մեջ, 2011 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաս-

տանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության[1]» շրջանակներում ի թիվս այլ ռազմավարական նպատակային ցուցանիշների որպես թիրախ է սահմանվել նաև մշակող արդյունաբերության արտադրողականության իրական աճի ապահովումը: Նշված փաստաթղթում կարևորվել է նաև սննդամթերքի արտադրության զարգացումը, քանի որ հանդիսանալով արտահանման ծավալների տեսանկյունից երկրորդը (14% ընդհանուրի մեջ)՝ սննդամթերքի արտադրությունը կարևոր դերակատարություն ունի գյուղատնտեսության ոլորտի խնդիրների լուծման հարցում:

Նշված ռազմավարությամբ վեր են հանված սննդամթերքի արտադրության ոլորտի մի քանի այնպիսի հիմնական խնդիրներ, ինչպիսիք են պատշաճ որակի ապահովումը և վերահսկողությունը, երկարաժամկետ հատվածում հումքային բազայի սահմանափակությունը, սերտիֆիկացման միջազգային ճանաչումը, միջազգային շուկայում մարքեթինգի ապահովումը, տրանսպորտային հաղորդակցության անկայունությունը և այլն, ինչպես նաև սահմանված են այդ խնդիրների լուծմանն ուղղված որոշակի քայլեր, օրինակ՝ որակի միջազգային սերտիֆիկացման ենթակառուցվածքների ապահովումը (այդ թվում ազգային ստանդարտների և որակի վերահսկողության համակարգի համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին), որակի վերահսկողության համակարգերի ներդրումը, նոր շուկաների մատչելիության ապահովման աջակցությունը:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրային որոշմամամբ հաստատված հավելված «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն»:

2. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 24.02.2020թ. N278-Ա հրաման «Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների ցանկը, բյուջեն և կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի մասնակցության աջակցության ենթակա համաֆինանսավորվող ծախսերի տրամադրման կարգը հաստատելու մասին», ՀՀ

[1] ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրային որոշմամամբ հաստատված հավելված «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն»:

էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք էջ՝ https://www.mineconomy.am/edia/10862/hraman%20278.pdf:

3. «Արդյունաբերության քաղաքականության ռազմավարությանը եվ միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, https://www.e-draft.am/projects/2237:

4. ՀՀ կառավարության թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշման հավելված, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագիր», https://www.gov.am/files/docs/4586.pdf:

5. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կայք էջ, տվյալների բազաներ, հրապարակումներ, տարեգրքեր https://www.armstat.am/am/:

## THE ROLE OF FOOD INDUSTRY IN THE PROCESSING INDUSTRY

**GEVORGYAN KORYUN**
*GSU Lecturer*
*PhD student of the chair of Management and Finance,*
*Faculty of Economics*
*e-mail: kor.gevorgyan@gmail.com*

Industry has traditionally been one of the most important sectors of Armenia's economy. The share of industry in the structure of Armenia's GDP fluctuated between 13-25% in different years. At the same time, industrial production largely depends on the dynamics of changes recorded in the manufacturing industry, since the latter provides more than 55% of the added value created in the industry.

From 2000 to 2020, the number of entrepreneurs in the industrial production sector increased 2.6 times, reaching 3253 individuals. Although the number of economic entities in the manufacturing industry has not changed significantly over the observed period, around 87-90% of all economic entities of the entire industry work in the processing industry itself.

For the period 2000-2017 industrial productivity increased about 8.1 times, and for the period 2018-2020 it began to decline due to a reduction in the productivity of the manufacturing industry. On the other hand, the productivity of both total industrial production and manufacturing increased by about 2.6 times from 2009 to 2017.

Thus, it is important to emphasize that the growth or decline in the industrial sector, as well as the growth or decline in labor productivity in industry, largely depend on the dynamics of the manufacturing sector itself.

In turn, the food industry during the entire period under review had the largest share in the processing industry, accounting for almost half of the output of the processing industry in some years. However, an increase or decrease in the latter does not always lead to positive or negative dynamics in the manufacturing industry, respectively.

***Keywords:*** *Gross Domestic Product (GDP), industry, manufacturing, manufacture of food products, growth, structure, number of economic entities, productivity.*

# РОЛЬ ПИЩЕВОЙ ПРОМЫШЛЕННОСТИ В ПЕРЕРАБАТЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ

**ГЕВОРКЯН КОРЮН**
*Преподаватель ГГУ*
*Аспирант кафедры менеджмента и финансов*
*электронная почта: kor.gevorgyan@gmail.com*

Промышленность традиционно была одной из важнейших отраслей экономики Армении. Доля промышленности в структуре ВВП Армении в разные годы колебалась в пределах 13-25%. При этом промышленное производство во многом зависит от динамики изменений, фиксируемых в обрабатывающей промышленности, так как последняя обеспечивает более 55% создаваемой в отрасли добавленной стоимости.

За 2000-2020 годы количество предпринимателей в отрасли промышленного производства увеличилось в 2,6 раза, достигнув 3253 человек. Хотя количество субъектов хозяйствования в обрабатывающей промышленности за наблюдаемый период не претерпело существенных изменений, все же около 87-90% хозяйствующих субъектов всей отрасли работают в сфере самой перерабатывающей промышленности.

За период с 2000 по 2017гг. производительность промышленности увеличилась примерно в 8,1 раза, а в период с 2018 по 2020гг. начала снижаться за счет сокращения производительности обрабатывающей промышленности. С другой стороны, производительность как всего промышленного производства, так и обрабатывающей промышленности увеличилась примерно в 2,6 раза в период с 2009 по 2017 год.

Таким образом, важно подчеркнуть, что рост или спад в промышленном секторе, а также рост или спад производительности труда в промышленности во многом зависят от динамики самого сектора обрабатывающей промышленности.

В свою очередь, пищевая промышленность в течение всего рассматриваемого периода имела наибольшую долю в перерабатывающей промышленности, составляя в отдельные годы почти половину продукции перерабатывающей промышленности. Тем не менее, увеличение или уменьшение последней не всегда приводит к положительной или отрицательной динамике в обрабатывающей промышленности соответственно.

***Ключевые слова:*** *валовой внутренний продукт (ВВП), промышленность, обрабатывающая промышленность, производство пищевых продуктов, прирост, структура, количество хозяйствующих субъектов, производительность.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 16.09.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 30.09.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: